

ԲԱԺԱՆՈ՞՞ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշխարհոյ համար	
Տարեկան	12 Ձր.
Վեցամսեայ	6 »
Արասահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 ժր.
Վեցամսեայ	1.50 »
ՎԱՆՍԻԿ ՎՃԱՐԵԼԻ	

Մանուցանանք սոցիալական երեսակ համար 40 սանթիմ հ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ հ. երեսին սակի սակարկելու համար 20 ժր. զեղը կըլայ:

Պաշխարհոյ համար ձեռքի  
( 15 ՍԱՆԹԻՄ )

# ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱՎՈՒՄԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ դրկի  
Խմբագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

Կրթիւթիւք եւ յան տրուի

Արասահմանի համար ձեռքի  
( 20 ՍԱՆԹԻՄ )

## ԹՈՒԼԱՍՈՐԹՆԵՐԸ

Եթէ կայ ազգ մը որ ամենէն աւելի խելոց մնացած է այսօր կրօնական պաշտօնեաներու տեսակէտով, ազգ մը որուն կղերականները երբէք չեն հասկցած իրենց կոչումը ու չեն նուիրուած անոր, առանց երկբայութեան հայ ազգն է:

Ինչոքեանք իր «մաքրակրօն ժպտադէմ», բարեկիրթ պատուելի քարոյչն ունի. կաթողիկէ իր եռանդուն ու գործունեայ, շարքառ ու խստամբար հովիւր—բաթէան, որ ամէն տեղ կը վազէ, ամենուն կը հասնի, աղքատին յոյս կուտայ, հիւանդին մխիթարութիւն, մէկը կը շոյէ, միւսը կը համոզէ, մինչեւ որ իրեն հետեւող մը գտնայ, նոր փրկուած մը ձեռք բերէ:

Իսլամն իսկ իր մոլեռանդ, տղէտ բայց կատաղի մօլլան ունի, որ իր հաստակիցներու բոլոր խաւերուն մէջ կը թափանցէ, կը խօսի, կը պատմէ մարգարէին գործերը, կը զրդոզէ ամբոխին զայրոյթը «զգուելի կեանքով զէմ ու կրնայ մէկ օրուան մէջ հաստացեալներու ահեղ զանգուած մը ստորի կանգնեցնել: Միւսը կը զրդոզէ հրամանը միւնարէյին բարձունքէն արձակուած՝ կրնայ առաջ բերել զարհուրելի շարքերու, անհրեւակայելի կողոպտաներու ահարկու տեսարան մը: Ո՞վ չի գիտեր թէ ի՞նչ ստորափելի զեր խաղացին մօլլաները մեր վերջին դժբաղդութեանց ստեն:

Միայն մեր մէջ է որ կրօնքի պաշտօնեան ամենէն ողորմելի արարածը սեպուած է: Իր ձայնը ոչ մէկ արձագանգ կը գրտնէ ժողովրդին սրտին մէջ: Մտքով ու հոգիով անգամալոյժ, մեր կղերականները, հեռու ու է բարոյական ազդեցութիւն ներշնչելէ, ամէն տեղ ու ամէն տեսն, կարծես լռիկ համաձայնութիւն մը գոյացուցած են երբեք գլուխ մը Աւետարան կարդալէ անդին շանցնիլ:

Այլապա ան մարդորոնները անխիղճ շահատակութիւններով ժողովուրդը բաժան բաժան կը նեն աներկիւղ, եղբայր եղբոր գէմ կը լարեն, կոյր ու անդիտակից ծիսաժողովիւն մը մտցընելով անոր մէջ, ու քսնի մը ամբիւն կը տեսնես որ ահագին հերձուած մը առաջ եկած է, խուլ կալու մը սկիւղ առած, որ ապագային տակն ու վրայ պիտի ընէ ամբողջ ժողովուրդը: Բայց որո՞ւն փոյթն է:

Կրօնքի անունը շահագործող այս լիբր հացկատակներուն սրիւրագործութեանց արգելք հանգիստնալու համար ի՞նչ կընեն մեր կղերները, մեր քահանաները մանաւանդ, որոնք ժողովրդին բոլոր խաւերուն մէջ մտնելու և մօտէն անոնց վրայ ազդելու ամէն գիւրութիւն կը վայելեն:

Առանց վարանումի կրնամ ըսնել թէ, մինչև այսօր բան մը չեն ըրած ու չի պիտի ալ ընեն: Որովհետեւ իրենց հակառակորդներուն հետ մրցիլ կարենալու համար ո՛չ պէտք եղած մտքի պաշարը ունին, ոչ ալ կամքի անհրաժեշտ կորովը:

Տարիուկէս առաջ, Պօրտի բնկիրութեան գործակալներէն պատուելի մը միլիոյէ եկաւ, հայերուն մէջ բողոքականութեան փրօփականաւ ընելու, ու ժողովարանին բեմէն սկսաւ տափակ ախուրտներ պուշտալ հասարակութիւնը շրջանելու համար: Քանի մը ամիս ետքը, վարժարան մըն ալ հիմնեց, և յայտարարութիւն մը հանեց իր ծրագիրը պարզող, յայտարարութիւն մը այնքան անհեթեթ ու անիմաստ իր պարունակութեամբ, որ քան այսպէս իր լեզուական սխալներով:

Անկից ետքը, պատուելին ամէն մասն ելած տեղը, ուղղակի կամ անուղղակի կը հալածէր Ազգ. վարժարանի ուսուցիչները, մէկը անհաւատ, միւսը կուսակցական, ուրիշ մը անկարող կը հաշակէր, ծնողները կը համոզէր որ զուակնին միայն իր վարժարանը շրջեն, որուն հողարու-

մէկ կեղծ ու անգոյ առաւելութիւններ կը վերագրէր առանց խպնելու:

Այս ամենուն հանդէպ լոկ անտարբեր ակնառաններ կը հանգիստնալին մեր թուրամորթ քահանաները: Մէկը կելլար Պուլկարիոյ շրջանը կընէր «քէֆը» տեղը բերելու համար, միւսը խոշոր փորը փռած՝ կը զուարճանար մինչև իրիկուն քանի մը զատարկապորաներու ընկերակցութիւնով, որոնց ամենօրեայ ժամագրավայրը՝ դարձած էր կարծես քահանային «նենակը»: Ոչ մէկը տեղէն չարժեցաւ, գոնէ եկեղեցիին բեմէն քանի մը խօսք ըսելու համար:

Այսօր արդիւնքը կը տեսնուի. հայոց վարժարանին ճիշդ քովի կը պատուելին մասնաւոր վարժարան մը բացած է, և յայտնի կալու կուզէ մղել: Իրեն կուսակիցներ ալ ունի արդէն, որոնք չեն վարանի ցրի գովասանքներ տեղալ, և յառաջիկայ շրջանին համար յաջող հող պատրաստել:

Իսկ մեր կղերականները թող տակաւին առաջնորդարաներու անկիւնը փտտին, իրարու միս ուտեն, առ ու ան անաթեմայի ենթարկեն, լանջախաչի մը համար հազար ստորնութիւններ յանձն առնեն: Մենք անխնայ կը ձաղկենք իրենց ամէն մէկ թերութիւնները առանց վախճալու իրենց պահեստի սպառնալիքներէն և բորբոսած նպովքներէն:

ՇԱՂԱՊ

### ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Յ. Կ Պօսեմոսիսեանի

Ա. Տարի 60 սանթիմ, Բ. Տարի 1 Ֆրանք, Գ. Տարի 1 Ֆրանք, Կոնէ 20 օրինակ գնողներու համար 15 0/0 զեղը:

Վճարուելիքը կանխիկ, Եանձնարարութեանց համար գիծել յօրինողին սա հասցէով

Յ. Կ. ՊՕՆՃՈՒԿԵԱՆ (Պուլկարիա) Վտոնա

## ԿՈՈՒԻՆՔ

Այս սիւնակներուն մէջ կը հարցուէր թէ՛ ի՞նչ ընեն մեր բնիկ երկրին սրտահատոր եղբայրներն ու քոյրերն, որոնք յարածամ կը հալածուին խստորէն, կը տանջուին անլուր ու քստմնելի տուայտանքներով և կուսակցներ իրենց հոգիները անբընական մահով:

Հարցումը լռելիայն ուղղուած էր շեշտակի արտասահմանի հայութեան այն մասին, որ պիղծարքեան հովեր առած՝ գունաւոր ու պղտոր ակնոցը քիթին, ալ ու ձախ պատգամներ կորոտայ և անխըղճօրէն հայութեան այսօրուան դառնակակիծ և անտանելի կուսութեան պատճառը յեղափոխութեան կը վերագրէ: Իսկ արտասահմանի հայութեան կորովամիտ և բանիւրուն մասը կատարելապէս համոզուած է թէ՛ հալածումը տարածում կը բերէ իր ետեւէն, և խժգոթութիւնը՝ բողոք ու յեղափոխութիւն: Պատմականօրէն հաստատուած բացարձակ ճշմարտութիւն մըն է ստիկա: Եղափոխութիւնը ջարդեր չի ծնաւ, այլ ընդհակառակը, սխթեմաթիք ջարդերը հայութեան սրտին մէջ արծարծեցին յեղափոխական ոգին:

Ի՞նչ ըրաւ Յոյնը, ի՞նչ ըրին Պուլկարը, Սերպը, Կրէտացին, որոնք թրքական անտանելի ըէժիմին սակ կը հեծէին, և այսօր, իբրեւ ազատազգեր արեւուն տակ՝ ունին իրենց ազատ հայրենիքը և մեր բարի նախանձը կը շարժին յարածամ: Այս ազատագրուած ազգերը հիմնովին ըմբռնած էին թէ՛ իրենց փայփայելի նպատակին հասնելու միակ միջոցը կը կայանար կուսելու մէջ: Ահա՛ միակ ուղին, ուսկից պէտք է ընթանայ թէ՛ արտասահմանի և թէ՛ թուրքիոյ հայութիւնը անվհատ անսայթաք:

Թուսօ-թուրք պատերազմէն ետք՝ երբ Պալքանեան ազգութիւնները ազատուեցան բոլորովին թուրքիայէն, թուրքը զգաց թէ՛ միեւնայն տեսարանը պիտի

պարզութիւնսն ու շ կամ կանուխ արեւելեան մասին մէջ, ուր կայրին թէպէտեւ այլազան տարրեր, սակայն ուշագրաւ տարրը կը հանդիսանայ հայր. վասն զի հայն է որ Սան-Սթեֆանօի դաշգրութեան մէջ ունեցաւ իր 16րդ յօդուածը, որ յետոյ թուողարձակութեամբ մը փոխուեցաւ Պերլի-լինի 61րդ յօդուածին:

Թուրքը տէրութեանց ստիպմամբ 61րդ յօդուածին տրամադրութիւնը ընդունեց, սակայն մաքրապէս լայն միջոցներով և մեղանկատու պարագաներու բերումով չի գործադրեց իր խոստումը, այնուհանդերձ զգաց թէ՛ հայութեան խնդիրը թամակ-լէսէ սուրին նման կոխուած է իր գլխուն:

Այս սպանական վտանգէն ազատելու միջոցը գաւ հայրական շարքերը սարքելով, Հայաստան առանց հայու, ահա համիտական գաղանային ծրագիրը:

Արեւելեան կողմը Ռուսական ահեղ արկին ահարկու թաթը, իսկ արեւմտեան կողմը համիտական լախար: Թաթէն աղատուելու մտաւոր յոյս մը շնորհմամբ ուր, վասն զի խիստ ուժեղ միանուն քննարկ մէջ պրկուած կըզգանք ինքզինքնիս, իսկ հիւանդ մարդուն հարուածներէն ազատուելու յոյսը կայ և պիտի մնայ միշտ:

Ահա այս պատճառաւ է որ Ռուսահայերը, ինչպէս շնչուած էր «Աւո» ասկէ մէկ քանի ամիս առաջ իր մէկ խմբագրականին մէջ, կուգան կը միանան մեզի՝ թորքահայերու, Թուրքիոյ մէջ ոչ թէ առ այժմ անկախ կայան մը հաստատելու, այլ գոնէ հոն մեր արեւակից եղբայրներուն համար ինչքի, կեանքի և պատուի կատարելու ապահովութիւն մը ձեռք ձգելու գովելի մտադրութեամբ:

Թուրքին կողմէն ուրեմն պատ-

գրուած է սիւղեմաթիքօրէն հայալինը գրութիւնը, և կը հարցուի, ի՞նչ ընեն:

Պատասխանը պարզ և մեկին է. կախ և մի միայն կախ:

Սակայն ոչ այն եղբայրասպան կուրը, որ տեղի կունենայ արտասահմանի հայութեան մէջ, Սոյնգունակ կուրը կը շլատէ պարզապէս հայութեան բոլոր անդամներն անխտիր և մեծապէս կը հրճուեցնէ մեր արիւնկալ թշնամին:

Կատարելապէս ինքնամփոփումի ժամանակ է. ահեղ շրջանէ մը մը կայնինք, կորուստ կամ մահ: Մեր բազմացեալ նպատակին հասնելու համար միայն միջոց մը ունինք առջեւիս, կախ, միշտ կախ է կախ ոչ մեր եղբորը գէ՛՛՛, այլ կոխ թշնամիին գէ՛՛՛. կախ՝ խոսքով, կախ՝ գրչով, կախ՝ զէնքով:

ԲԱՆԻԿ

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՒՐԻՉ 17 ՕԳՈՍՏՈՍ

Նախկին Պարսկաստանից. — Հաստատուած զիսկիս Թաթիլիզում:

Առ հասարակ մի նոր վեպ որ կապուած է հասարակութեան հետ. կարող է իւր որոշ օգուտները և լիարժեքները ունենայ: Այդպիսի զեպերից և ազատ չէ թափրիզը, համարեալ ամէն օր ամէն ժամ կարելի է լսել, ինչպէս վերջերս տեղի ունեցաւ, զեպեր որից հասարակութիւնը օգուտներ կողմեր ունի, թէ լաւ թէ վատ, մասնաւոր ամուսնական խնդիրը, որ այստեղ բոլորովին աչքի թողի է առնուած:

Դեպքեր չատ են, եթէ մի առ մի յիշեմք մեզ շատ հեռու կը տանին. յատկապէս քանիստ ինքն, որ կապուած են հասարակութեան հետ յոյս հանինք՝ որ ինքն քննադատէ— չը նայած որ ինքը գիտէ բայց շատ ազաւազուած կերպով— եւ յետոյ իւր պաշտպաններով՝ ձեռք ձեռքի սուած

ըլլանք մեր ընթերցողներուն անիշխանական վարդապետութիւնը:

Անիշխանական գաղափարները ծընունդ առած են ամենահին ժամանակներու մէջ, իշխանութիւնը մերժել կրնանք բոլոր թէ մարդկային բնութեան յատկանիշն է, որ յայտնուած է միշտ քիչ թէ շատ գիտակից ապստամբութիւններով «Բնութիւնը ո՛չ աէր, ո՛չ ծառայ ստեղծած է, ես չեմ ուզեր ո՛չ օրէնք տալ, ո՛չ ստանալ»: Ըսած են Տիւրքոյի պէս ամէն ժամանակներու անիշխանականները: Չիւր ընթերցողները թերեւս չատ պիտի գործնան, կըր իմանան թէ մեր պատմութեան մէջ ալ տեսնուած է զօրութեան անիշխանական շարժում մը որ, արեւան մէջ սղողուեցաւ, ինքզուցեալ քանի մը սերունդ կա. թողիկոսներու, եպիսկոպոսներու և հայ իշխաններու ձեռքով: Սոսքս Ը դարու Թոնդրակեցիներու և հայ անիշխանականութեան

ոչնչանցնէ այն ճնշումները, որոնք ազդու են ամէն կողմից:

Ամէն տեղ յեղափոխութեան անուան սակ գտնուած են խաչագողներ, այդ շարքից զերծ չի մնաց և Պարսկաստանը:

Մինչեւ այժմ այդպիսի խաչագողութիւն պէտք է ասած Պարսկաստանում մանաւանդ թափրիզում չէր պատահել, չնորհի հոն տիրող յեղափոխական մաքուր հոսանքին: Վերջերս մի սին Հայկ Ղարապաղցի, Հայ Յեղ. Դաշնակցութեան անուամբ, թոյլ է տալիս Պարսկաստանում հաւաքել, առանց մի որ եւ է կոմիտէի թոյլտուութեան մի գումար, մօտաւորապէս 300 թուան պարսկական, ձեռացնելով իրեն ջերմ յեղափոխութեան պաշտպան:

Ինչպէս ամէն տեղ Դաշնակցութիւնը ունի իր յեղափոխական կոմիտէն, հետեւապէս ծածուկ չէր կարող մնալ այդ հանգանակութիւնը: Անմիջապէս զիմուտ են Վրէժի կեցրոնական կոմիտէին հարցնելով թէ ո՞վ է վերոյիշեալ պարոնը: Յանկարծ գանուած են վրէժուած ճանաչողներ, զա այն էր՝ որին երկու ասորի յասակ փնտրուած էին իւր մի քանի նոյնանման խաչագողութեան համար կողկատում:

Այդ հանգանակութիւնը անում է պարոնը. Դոյանում և Սափրիզում (Պարսկական քաղաքներ են): Որք իւր ոտքերով ընկել էր, անմիջապէս վրէժի կոմիտէն հետադրում է, որ այդ պարոնին ամէն կերպ աշխատանքի թոյլ չի տալ շարունակել իւր խաչագողութիւնը, բացի այդ պահանջի հաշիւ. այդ չի յաջողում նրանց, արդէն հեռացած է իրենում և ճանապարհորդութեամբ թափրիզ, իւր խաչագողութեան մնացորդը շարունակելու:

Սոք միւսիւմ—ստում է Ռուսաց ժողովրդական ոճը, կացինը քարին կպաւ. տեսնելով որ ընկել է թալաքը իւր ոտքերով: Այդ գրութիւնից ազատուելու համար խաչագողը ուրիշ ելք չունէր անելու, եթէ ոչ յատուկ քսութեամբ մօտենայ նրանց՝ որոնցից կախուած էր իր վճիռը: Այդ չը յաջողուեց, կոմիտէն պահանջեց հաշիւ հիմնուելով գրաւոր փաստերի վրայ:

Մի քանի օր այս ու այն կողմը ձգձգելից, տեսնուած է որ ոչինչ չի

նախաձեռնող Սմբատի մասին է (տես պատմ. հայ. Չամչեան, Վեհապիկ, 1795, Բ հատոր, էրես 884):

Թոնդրակեցիներու իսկապէս անիշխանական վարդապետութիւնը արագօրէն տարածուեցաւ քանի մը գիւղերու մէջ: Ժգաղղաբար, այն ատենուան հայ իշխանութիւնները ստակալի հալածանքներով, հրով և սրով սրբեցին աշխարհի երեսէն այդ գիւղերը, և այդպէսով ինքզինքին Թոնդրակեցիներու ազատական շարժումը, ճիշդ ժամանակակից տաճիկներու պէս: Միկա ցոյց-կուտայ թէ որքան քիչ կը տարբերին իրարմէ իշխանութիւնները: Ըլլան ազգային, Ըլլան օտար:

Ի՞նչ կը դաւանէին Թոնդրակեցիները: Անոնք կը մերժէին ամէն օրէնք ու իշխանութիւն, կը մերժէին Աստուած և զօրութիւն ստիպումով տրուած ամէն պատուէր: Ահնուսը ազատ է ընել ինչ որ կուզէ. ոչինչ արգելուած է, և ոչ իսկ ազգապղծութիւնը (inceste). միայն թէ կաւելցնէին Թոնդրակեցիները, անհնար չուզէր քայն:

կարող անել. խաչագողը զիմուտ է իւր նմաններին, որոնք պէտք է ասած նոյնպէս խրուած են աղմի մէջ մինչեւ իրենց կոկորդը. նման գնման իւր սիրէ կըսէ առածը: Ծիշդ այդպէս էլ է:

Այնուհետեւ սկսուած է գործը մի քանիսի հետ, գոմիտէն տեսնելով որ ինչիւրը արդէն սուտ սխալ է տարածուել, և վերջը կարող է թիրիմացու թիւններ յատալ զայ, հարցը պարզ գրեց հասարակութեան առաջ:

Այդպիսի զեպերում երբ ինչիւրը պարզ է գրուած, հասարակութիւնը ինքը գիտէ քննել և իւր եզրակացութիւնը յայտնել: Այդ առիթով կազմուեց մի ընդհանուր ժողով, բաղկացած մի քանի անդամներից. ի միջի այլոց ներկայ էր այսպէս ասած խաչագողի փաստաբանը, մի ինչ որ Սմբատ, որ նրա ընտրածն էր այն յուսով որ կրնայ այդ միջոցով ազատել իրեն այդ գրութիւնից: Խնդիրը պարզ էր. կոմիտէն նախ հանդանակութիւնը իրեւ փաստ յասակ բերեց, և յետոյ շնչաց որ այսու հետեւ չը համարձակուի հանգանակութիւն անել, ծայրայից զեպում կենթարկուի գործնական վճիռ, իսկ այժմ պարտաւոր է վճարել այդ գրամները:

ՆՈՅԱԹ

(Շարունակելի)

### ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Իսլամիայի թագ. Խորհուրդը առանձին գրութեամբ մի կողմ հաննէս Տ. Մինասեան անուն անձը քահանայութեան արժանաւոր և բարի վարքի տէր մէկը ներկայացուցած ըլլալով, Ազգ. կեդր. վարչութեան կրօնական ժողովէն անոր ձեռնադրութիւնը խնդրեց է և կրօն. ժողովը որոշեց է գրել Պալկարիոյ այցելու հովիտն որ եթէ ինքն ալ կը վկայէ յիշեալ անձին պարկեշտութեանը և արժանաւորութեանը, Պալկա զրկէ ձեռնադրուելու համար:

Իսլամիայի մեր հայրենակից-

Հոս կը յայտնուի իրենց վարդապետութեան փիլիսոփայական բոլոր խորութիւնը: Սակա կը նշանակէ թէ անհասանելու մէջ տիրող հասարակական յարաբերութիւնները կը կատարուին հոգեբանական օրէնքներով, որոնք այնքան անբաժան են մարդկային բնութիւնէն, որքան ֆիզիքական ուժը՝ նիթականէն:

Անիշխանութեան ուսանումի քննադատները որոնք այս վարդապետութեան գէ՛մ վճական փաստ մը մէջ բերած ըլլալ կը կարծեն ըսելով թէ. երբ այլու իշխանութիւն և պատիժ գոյութիւն չունենան մարդիկ զիրար կը բզկտեն գայլերու պէս և ընկերութիւնը անկարելի կը դառնայ. ասով արդէն իրենց գաղափարին ստիպութիւնը ցոյց տուած կըլլան:

Մայրը հողմացոյց չէ, քամիներու քամահողմիքին ենթարկուած: Անիկա կուզուի ներքին սղակի կրով, և ստիպանութեան կամ բանտերու շնորհիւ չէ որ հասարակութիւնը գոյութիւն ունի: Ասոր ապացոյցը այն է որ աշխարհի բոլոր ստիպանու-

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Հումպէրթօ թագաւորին մահը և Պարսից Շահին գէ՛տ կատարուած սպանման փորձը վերջերս նորէն տարող աշխարհի ուշագրութիւնը հրաւիրեց անիշխանական վարդապետութեան հետեւողներուն վրայ:

Փափագելով իր ընթերցողները կարելի եղածին չափ ճշգրտութեամբ ծանօթացնել ժամանակակից հասարակական հոսանքներուն հետ, Շարժումի խմբագրութիւնը զիմուտ ըրաւ հայ անիշխանական մը, ինչպիսիով անկէ իր դաւանած վարդապետութեան և նորագոյն անիշխանական շարժման մասին ուսումնասիրութիւն մը ընել Շարժումի մէջ: Ստորեւ կուգանք հրատարակել մեր ստացած պատասխանը, և կը յուսանք թէ բաւական ծանօթացուցած պիտի

ներէն կը խնդրենք որ, առանց կողմնակալութեան և իրենց խնդրի ձայնին հետեւելով միայն պէտք եղած վկայութիւնները տան յիշեալ քահանայապետին վերաբերմամբ:

Կը վախճանք որ սակայն, Գեր. Այցեւու Հովիւը մեր ներկայ թեւադրութիւնն ալ եկեղեցական իրաւունքներու վրայ ոտնձգութիւն մը կը համարէ, և մեզի ալ բանադրանքի կենթարկէ:

— Էտիրնէցի հայերը կերեւալ թէ բոլորովին վաղ անյնի կուզեն հայ որբեր որգեցրելու բարի սովորութենէն: 13 որբերէն իրենց քով մնացած միայն չորսն ալ անցեալ շարթու պատրիարքարան զրկեր են, ուրկէ Ալգ. հիւանդանոց վոխադրուեր են առժամապէս:

Հիւանդանոցին մէջ պատու պարուած որբերուն թիւը այնքան շատցեր է որ, հոգաբարձութիւնը ստիպուեր է խնդրել Պատրիարքարանէն, որպէս զի մասնաւոր շրջաբերականով մը իմացնէ գաւառ, առաջնորդներու և առաջնորդ, փոխանորդներուն որպէս զի, այլ ժամանակ մը նոր որբեր չի զրկեն հիւանդանոց:

— Այլ թուանի մէջ չորեքշաբթի օր, օգոստոս Թին հրգեհ մը ծագեր է, որ 3 ժամ տեսած է, 16 տուն այրելով, Հրգեհին ուսուցիչը աննկու համար ուրիշ շատ մը տուներ ալ փլցուցեր են: Ա. մ. բողջ կորուստը 1050 Օսմ. սովիի կը հասնի: Այս պատճառաւ բողջ մայիս ընտանիքներ անպատասպարութիւն մնացեր են, 116 ընտանիք լեռներու մէջ կը բնակին տուն տեղ չունենալուն համար:

— Էրզրումի մէջ քանի մը շաբաթ առաջ անընդհատ անձրեւ տեղացեր է 8—10 օր, կարկուտի հետ խառնուած, որ մեծ կու-

րուսա պատճառներ է կալու կտին: Երգու մշակներ Բասէնի գաշտին մէջ կայծակնահար ըլլալով տեղն ու տեղը մեռեր են:

— Պոլսոյ թերթերը կիմադրեն թէ Իլմիրեանց կառկի գրական մրցանակաբաշխութիւնը պիտի կատարուի Հոկտ. 14ին: Բոլոր քննիչներու տեղեկագրերը արգէն յանձնաժողովին հասած են:

— Չարսանձագի մէջ ալ Չանչեանցի համար հոգեհանգիստ կատարուեր է:

Թուրքիոյ բողջ քաղաքներուն մէջ հանգուցեալ որբերուն մարբարին ի յիշատակ հոգեհանգիստներ կատարուեցան: Արտասահմանի հազիւ մէկ քանի քաղաքներու հայութիւնը ուղեցայդ անման բարերարին վերջին յարգանք մը ընծայել: Մանուաւր Պուլարիոյ հայութիւնը բոլորովին անտարբեր մնաց. բացի միւլիպէէն ոչ մէկ տեղ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ: Կը սպասենք որ Վառնան ալ փութայ իր յարգանքի պարտականութիւն կատարելու:

— Կարնոյ հայ հոռիմէականաց առաջնորդ Տ. Կարապետ Եպիսկոպոս Քչուրեանի անյայտանալը արդէն մեր նախորդ թուով ծանուցած էինք: Ահա ստիկ նորագոյն մանրամասնութիւններ:

Յիշեալ Եպիսկոպոսը ոչ թէ Անվերս պանդոն մը, այլ ճիշդ թիւ վարդապետներու վանք մը օթեւաներ է. ուր հանգանակութիւն մը կատարուելով գոյացած գուժմարէն մաս մը յանձնուեր է իրեն ու բաւական գումար մըն ալ ի պահ տրուեր է: Կարապետ Եպիսկոպոս մը մեկնելով ալ չի վերադառնար: Ճիշդ թիւները կը կասկածին որ մի գուցէ շինծու կրօնականի մը հետ եղած ըլլայ իրենց գործը, և կը հեռագրեն այն տեսն գեռ ողջ Տրապիզոնի առաջնորդին: Այս վերջինը այդ

անուն Կարնոյ առաջնորդ Եպիսկոպոսի մը գոյութիւնը և անոր Եւրոպա գտնուելը տեղեկացնելով, լուսնակարն ալ կը զրկէ: Ասոր վրայ ճիշդ թիւները փրնաւուրի կսկսին, և գեռ արգիւնքի մը չեն հասած:

— Պարսից Շահը Բաբիլ գլուխուած ատեն խանութեան տիպոստուեր է Տիգրան Քելիկեանի, որ արուեստահանգէսի պարսկական բաժնին մէջ գորգի, թաւիչի յարսնապակիի և զանազան թանկագին ապրանքներու ճոխ ցուցադրութիւն մը ըրած էր: Տիգրան խան Նիւ Եօրքի մէջ հաստատուած է և արուեստահանգէսի ժիւրիին ալ անդամ ընտրուեր է:

— Բարիլի արուեստահանգէսին մէջ գումարուած բժշկական համաժողովին բաւական թուով հայ բժիշկներ ու բժշկական ուսանող ալ մասնա՛յներ են:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Վաշինկթօնէն կը հեռագրուի թէ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը տեղեկացած է որ Ռամ. կառավարութիւնը 6 յաժարակ և 2 թորբիւնաւ յանձնարարած է: Յաժարակները պիտի զինուին Քիլիի մէջ, իսկ թորբիւնաւերը ձէնովայի մէջ:

— Անցեալ թուով հաղորդած էինք թէ Հայֆայի մէջ Սուրիացիները թուրք զօրքերու վրայ յարձակած էին: Այս անգամ Եւրոպական թերթերը կը հաղորդեն թէ, ասոնց պետը, Եահիա պէյ կը շարունակէ լընդդիմաւ թուրք զօրքերուն և չի թողուր որ յանցաւորները ձերբակալուին: Պէյրութի վալին Հայֆա գալով խուզարկութիւն-

ներ կատարեր և պէտք եղած կարգադրութիւնները ըրեր է, տեղւոյն գերմանական գաղութին հանգստութիւնը անվրդոյ պահպանելու համար: Գերման պաշտօնական շրջանակները չեն ուզեր լուրջ կարեւորութիւն տալ այս միջադէպին:

— Երկու գերմանացիներ ուրոնք կանոնաւոր անցագրերով Արֆայէն Տիարպէքի կը ճամբորդէին, ձերբակալուեր են ու բանտ դրուեր, առանց ուէ լուրջ պատճառի: Պոլսոյ Գերմ. դեսպանը անմիջապէս խիստ դիմումներ ըրեր է Բ. Կրան:

— Վերջերս բազմաթիւ յոյներ Պոլսոյ մէջ ձերբակալուեր են կառավարութեան կողմէ, այն պատրուակով թէ՛ Աթէնքի «Թնիք» Հեթերօտին ի նպաստ հանդանակութիւն կատարած են: Պոլսոյ յոյն պետականը այս առթիւ պէտք եղած բոլորը տուաւ արտաքին գործոց նախարար Թէֆֆի փաշային:

— Սուլթանը իր 25 ամեակին առթիւ գերմանիոյ գեւպանին և մասնաւոր պատուիրակին իթիխարի ականակուռ պատուանշան շնորհեր է: Միւս բոլոր գեւպանները և պատուիրակները նոյն վարձատրութեան արժանանալ կը յուսան:

— Մրանսայի Երեսփոխ. ժողովին նախագահ Բօլ Տէշանէլ Պուլիս հասա: Պարսից Շահը ամսոյս 14ին Պուտափէշաէն Պոլիս ուղեւորեր է:

Թ Ո Ւ Ր Ք Ա Ն Ի Ա

Ռուսական թերթերը մամանակէ մը ի վեր բուռն յարձակումներով կը բողբեն թէ, հակառակ նաչէփիչի ռուսական նախարարին ըրած խոստումին, տակաւին Պուլկարական նախարարութիւնը ոչ Արաֆօֆն ու իր

թիւնները պատճառական օրինադրութեամբ քորք սպառնալիքները, ո՛չ բանտերը, ո՛չ ստատակալի քաղաքացիները և ո՛չ նոյնիսկ կատափնատը չեն յաջողած ոճի՛ր երու առաջը աննկ: Վերջումս թիւնները վրայ կը հասնին, որպէն շատ ուշ է: Խոսքը ֆրանսայի մէջ ստատի կարգ անցած է իճակագրութիւնն ըրցող կուսան թէ ոճագործներուն մեծ մասը արդէն իսկ արդարութեան արատաւորեալներ (récidiviste) են նոյնպէս թիւնը կուսացող ցաններ թէ, նոյնիսկ մանու պատիժը չէ յաջողած սպաննութեան թիւնը նուազեցնել, քանի որ մահու պատիժը վերցած երջիւրներու մէջ անոնց քա՛ակութիւնը ո՛չ պակասած, ո՛չ աւելցած է: Առէք նոյնիսկ իր բնու օրինակ, անիշխանական սպաննութիւնները, որոնք նուազ յաճախաբէպ չեն ֆրանսայի մէջ, ուր գլխատուեցան Ռաֆալը այնան, Հանրի, Բազէրիօ, քան թէ Իտալիոյ մէջ, ուր մահուան պատիժը վերցուած է: Ընկերական յարաբերութիւնները, կրտէ անիշխանականը, կը կառավարուին հոգեբանական օ-

րէնքներով, որոնք կազդուին նոյնպէս ժառանգականութենէն, դաստիարակութենէն, անտեսական պայմաններէն և այլն: Եթէ գուժ քաղցիկի ընթացող, ձեռք չես խոթեր արձարանին մէջ քովի կը նստող բարեկամիդ գրգռներ անոր գրամպանակը գողնալու համար, կամ չես սպաննուեր այն մարդ որուն կը հանգիպիս մութ գիշեր մը փողոցին մէջ միսմիսակ, հաւատա՛ ինծի, ոտտիկանութիւնէն վախնալուդ համար չէ, այլ քու մէջդ բան մը կայ, որ կարգիլէ քեզի այդպէս վարուել, աւելի սպառնալութեամբ քոն թէ ոտտիկանին գէնքը:

Որքան ալ կարեւոր եղած ըլլայ թոնգրակեցիներու շարժումը, ինչպէս նաեւ ուրիշ նոյնանման շարժումները զանազան երկիրներու մէջ, որոնք վարչապետները զսպուած ու խեղճուած են, անոնք անմիջական ազդեցութիւն մը չեն ունեցած ներկայ անիշխանական շարժումներու

ձագման վրայ, որոնք կարեւորութիւն ստացան միայն անցեալ դարու վերջին կիսուն մէջ:

Երբ ժի. դարու ֆրանսական մեծ յեղափոխութեան նախակարգապետ հռչակաւոր ազատաստի գրողները բացարձակ միպետութեան հիմերը խորտակեցին, ժողովուրդները քաղաքական նոր ձեւեր փնտռեցին հիմնուած իսկականութեան վրայ, և կարծեցին զո՛յն գտնել երեսփոխանական գրութեան մէջ, որ ժողովրդին կամքը պիտի արտայայտէր:

Ամբողջ ժի. դարը այս գրութեան գործադրութիւնը եղաւ, սահմանադրական միպետութեան և հասարակութեան ձեւին տակ, արշական այս իր թէ բանաւոր գրութիւնը լոկ բողջնակալութիւն յանգեցաւ, որ այսօր ամէն մարդու բնականաբար նողկանք կազգէ: Որովհետեւ երեսփոխանական գրութեան հիմը եղող սկզբնական գաղտնութիւնները սխալ էին, և անիշխանականները զայն ապացուցանելու համար գեռարութիւն չունեցան, երեսփոխանական գրութեան կու-

սակեցները հասարակութիւնը կը նկատեն իբրև գործարանաւոր ամբողջութիւն մը, որ կրնայ իրեն յատուկ կամք մը ունենալ: Բայց, որովհետեւ ակներև է որ, քիչ թէ շատ բազմապիստ հասարակութիւն մը երբեք համաձայնութեան չի պիտի հասնէր, ընդունուեցաւ որ պէտք է բացարձակ մեծամասնութիւն մը փնտաել բոլորովին մեքենակաւորէն, որուն պիտի զօնուէր փոքրամասնութիւնը: Ասիկա բնութիւն մըն է, ճիշդ միպետներու բնութեան նման, զոր կը խոստովանին ն յնիսկ այդ գրութեան կուսակեցները: Բայց, կուսեցուներ, երկու շարեաց փոքրագոյնը պէտք է ընտրել:

Արդ՛ իրաւ արդեօք անհրաժեշտ է վոքրամասնութիւնները զօնել մեծամասնութեանց:

(Շարունակելի)

հետեւողները ձերբակալած, և ոչ ալ Մակեդոնական կօմիտէն լուծած է, որուն մասնակցութիւնը Միխայէլեանօր պահման և կարողութեամբ անձին դէմ, իբր թէ լարուած սպանման դաւաճանքով, հաստատուած է եզերանհերքելի կերպով: Ռուսական կառավարութիւնը իր Սօֆիայի ներկայացուցիչին հրահանգ տուած է վճարականապէս պահանջել այս հետապնդումը և մտադրութիւն ունի իր ներկայացուցիչը ետ կանչել, եթէ նպատակաւոր պատասխան մը չստանայ:

— Բազմաթիւ ձերբակալութիւններ անցի կուենան ռուսական բանակին մէջ: Հրամանատար Քիսիմօֆ, որ ծագումով պուլկար է, ծանր կասկածներու տակ ձերբակալուեց է: Կըսուի թէ ծածկագիր նամակներ գտնուեց են իր քով, որոնք այդ ձերբակալումը կարգաւորեցին:

— Պուրքէշի թերթերը կը հարգեն թէ ռուսական կառավարութիւնը օտար պանքաներու հետ կը բռնակցի նոր փոխառութիւն մը ընելու համար, փոխարէն տալով իր բնթրոլի արտագրութիւնները նմանապէս բանակցութեան մէջ է գերման անուանի շոգենաւային ընկերութեան մը հետ, ծախելու համար Սեւ ծովի և Ինուսի վրայ ռուսական կառավարութեան պատկանող նաւերու երթելու թեւակները զոյգ շահագործման իրաւունքը:

Հակակառավարական թերթերը շատ դժգոհ մնացած են այս որոշումէն, որով երկրին բոլոր հասոյթի աղբիւրները օտարին պիտի յանձնուի:

— Վիէնական թերթերը կը ջանան, հակառակ սեղական և ռուսական թերթերու հանած ազմուկին, հասարակաց միտքը հանդարտեցնել վտանգեցնելով թէ, պուլկար և ռուսական ծանօթ վէճը բարուք վախճան մը ունենալու վրայ է, և թէ ռուսական կառավարութեան սպառնալիքները իր Սօֆիայի ներկայացուցիչը ետ կանչելու մասին, լոկ անհակացողութեան մը վրայ հիմնուած էին: Իսկ վերջերս սահմանադրութիւն վրայ պատահած դէպքը պարզ ընդհարում մըն էր պուլկար մաքսանենգներու և ռուսական պահակաւորքերու միջև, որուն հետեւանքով զինուոր մը սպաննուած էր:

— Պուլկարիոյ Ֆէրտինան իշխանը մօտերս Բարիզ պիտի երթայ, վերադարձին կըսուի թէ Պոլիս պիտի հանդիպի և անկից կրկին Սօֆիա պիտի մտնէ: Կը յուսան որ իշխանին ներկայութիւնը յաջող լուծում մը պիտի տայ իրենց խնդրին:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Թարուէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ քրիստոնեաներ ջարդած ըլլալու ամբաստանութեամբ

գերման իշխանութեանց կողմէ ձերբակալուած Պօքսէրները գըլխատուեցան գերմանական զօրաբանակին մէջ:

Ջարգերուն մէջ կայսրուհին մատը գտնուելը անժխտելի կերպով հաստատուած է այսօր կայսրուհուն պալատին մէջ օտարական նախան նախարարին մէջ, յայտարարութիւնը գտնուեց է, որ քրիստոնեաները ջարդողներուն կարեւոր նուէրներ կը խոստացուի:

Նմանապէս կայսրուհուն մատուցուած տեղեկագիր մը գըլխուած է քրիստոնեաներու ջարդի մասին:

— «Թայմզ» կը հեռագրէ թէ Բաու-Թանկ-Պուի մէջ միսիօնարներու նոր ջարդ մը տեղի ունեցեր է:

— Լիու-Չանկի լիազօր պատուիրակութիւնը յաղթանակ մը կը նկատուի ռուս դիւանագիտութեան, կը կարծուի թէ ճարտն ալ համակարծիք է Ռուսիոյ:

— Փրանսական կառավարութիւնը իր հաւանութիւնը տուած է Բէրլինը պարպելու և Թիէն Չին քաղաքու մասին: Բարիզէն և Ս. Բեթերպուրկէն հեռագրով մասնաւոր հրահանգներ զրկուեց են իրենց ներկայացուցիչներուն և հրամանատարներուն, որպէս զի պատրաստ գտնուին ի հարկին Թիէն Չին քաղաքու համար: Հաւանական է որ Միացեալ Նահանգներն ու ճարտն ալ հետեւին նոյն ուղղութեան:

— Եանկայէն «Մոնիթինկ Բոսթոն» կը հեռագրեն թէ Լի-Չունկ-Չանկ կարգ մը զիջողութիւններ բրած է Ռուսիոյ և Քրիստոնեայի Բէրլինը պարպելու համար: Ռուսիա Մանչուրիոն պիտի առնէ, իսկ Քրիստոնեայի ստանալիքը դեռ յայտնի չէ:

— Եանկայէն կը հեռագրեն թէ Լի-Չունկ-Չանկ կայսերական հրովարտակով ինկ և Եունկ-Լու օգնական պատուիրակ կարգած է խաղաղութեան բանակցութեանց համար:

— Գոնթ Վալտէրդէ սեպտեմբեր 11ին Բէյրութ հասեր և ընդունուեց է փոխ հիւպատոսէն ու բարձրաստիճան պաշտօնեաներէ:

— Վերջին հեռագիր մը, բուլղոյին հակառակը ըլլալով կը հաղորդէ թէ Լի-Չունկ-Չանկ գաղթեցուցեր է բանակցութիւնները Թուան իշխանին բողոքներուն առթիւ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Ա

Նախագահ Քրիւկէր սեպ. 15ին, 5 ամիս արձակուողով եւրոպայ պիտի մեկնի և մեծ տէրութեանց պիտի ներկայանայ, աղաչելու որ միջամտեն Անգլիական կառավարութեան քով իր երկրին անկախութիւնը չի կորսնցնելու համար:

Քրիւկէրի բացակայութեան ա-

տեն Շալկ-Պուլկէր անոր տեղը պիտի բռնէ:

— Երեք կարեւորագոյն լուրեր մեզի կը հասնին [Թրանսպալէն, Թէրոնի մահը, Պոթայի գլխատումը և նախագահ Քրիւկէրի մեկնումը: Պատերազմը արդէն վերջացած կարելի է համարել, և ասէն ջանք կը ըլլայ հանրային խաղաղութիւնը վերահաստատելու համար:

Տանիէլ Թէրոնի մահը խիստ դառն կորուստ մը չեղաւ Պօքսէրներուն համար: Ասիկա շատ նշանաւոր հանգիսացած էր բանակին մէջ իր խելքով ու յանդգնութեամբ և շատ բան վերջարտին Պօքսէրները անոր:

— Բոլոր անգլիական թերթերը Քրիւկէրի մեկնումը իբր փախուստ կը նկատեն:

Թ Է Կ Ս Ս Ս Փ Ո Ւ Ր Ի Կ Ը

Ահարկու կրկնում մը անցեալ շաբթուները Լուիզիանայի և Թէքսասի ամբողջ ծովեզերքը հիմնադրուած կործանած է, իր աւերումները տարածելով երկրին ներսերը մինչև 100 մղոն հեռաւորութեամբ: Այս մասին հասած հեռագիրները քստմեցուցիչ են: Եւրոյ 3000 անձեր մեռած կամ կորսուած են: Կալիֆօրնի գաւառին մէջ միայն կորուստը կը հասնի 20 միլիոնի: 4660 տուն բոլորովին քանդուեց են: Քաղաքին շուրջ մարանները և ջրամբարները կործանած և հունձքերը փճացած ըլլալով սովը սկսած է երկրին մէջ ճարակիլ կործանած շէնքերուն փեկորները շրջակայ գիւղերուն վրայ թափած են անձրեւի պէս:

Մոլուս վրայ ալ մեծամեծ կորուստներ տեղի ունեցած կը կարծուի: Բազմաթիւ նաւեր խորտակուեց ու ընկղմեց են: Ամբողջ գաւառին մէջ աս ու ստրասի կը տիրէ:

Արդէն հանգանակութիւն մը բացուած է արկածեալներուն օգնելու համար:

Խ Ա Ռ Ե Լ Ո Ւ Ր Ե Ը

Կապուսի մէջ (Եգիպտոս) Հոռմայեցուց ժամանակէն մնացած հնութիւններ գտնուեցին: Երկու ստորերկրեայ սրահներու մէջ 28 խորշեր կերեւան, որոնց մէջ 60 մարդկային կմախքներ գտնուեցին: Իւրաքանչիւր խորշին վրայ գրուած է եզեր թաղուած անձին անունը: Ասոնցմէ զատ 41 ուրիշ կմախքներ ալ գտնուեցին մեռելական զանազան առարկաներու հետ:

— Փրանսայի Գէնէլ գիւղի մէջ Մառկրիտ Պոյէնվալ անուն կին մը 17 տարիէ ի վեր անընդհատ կը քնանայ եզեր անկողնին վրայ ու միեւնոյն վիճակին մէջ, առանց շարժում մը ընելու կամ բառ մը արտասանելու: Սիրտը

հազիւ որ փափախէ, շնչառութիւնը հազիւ զգալի կը ըլլայ, բայց մարմինը տաք է: Ոչ ոք կարողացած է բացատրութիւն մը տալ այս յախտեան կանքնութեան: Բժշկական բոլոր երեւելի ներկայացուցիչները չհաւանոր քննելու զացած են: Իր մայրը ամէն օր բերթոնի և հակթի գեղնուցի ներարկութիւններով կը սնուցանէ հիւանդը: Բժիշկները այն կարծիքն ունին թէ արթնցած ին պէս հիւանդը պիտի մեռնի:

Ն Ա Մ Ա Վ Ա Տ Ո Ւ Փ

Ռուսներոյ և Եգիպտոսի դեռ չը վճարող մեր բաժանորդներէն կը խնդրենք որ հաճին փութացնել իրենց բաժնեգրիւնները:

Թ Ա Տ Ր Ո Ն

Վաղը հինգշաբթի գիշեր ժամը 9ին Հաճի-Բահաքօ, ամառնային թատրոն Պօրխի մէջ արտակարգ ներկայացում մը կայ: Վառիէթէ խմբին կողմէն ի նպատակ խմբին Ա. դերասաններէն Ստավրօ և Եօրկիի:

Պիտի ներկայացուին անմահ Շէքսպիրի «Ռօմէօ Ժիւլիէթ» երեսակայական եզեր բրգութիւն 6 արարուած, 12 պատկերով:

«Աքրիքանա» անուն ծիծաղաշարժ կատակերգութիւն մը 3 արար և մէջընդմէջ երգեր ու պարեր:

Չ Ո Ւ Ա Ր Ա Ն «Կ Ո Ւ Փ Ե Ն Գ Ե Ը Կ»

(Տպագրական տառերու)

Կարճը Անտաղ . Ողիղ կարգ Հաշտար բարձրորիւն

Ամէն լիզուէ տպագրական տառեր և զանազանք գոհացուցիչ գներով:

Հասցէ՝ Fonderie typographique, Gutenberg, Sophia, Rue Graff Jgnatieff № 3, 9-25

Հ Ա Յ Վ Ա Ս Ա Ն Կ Ր Ա Ս Ա Ռ Ե Ն

Պատիւ ունիմ ծանուցանել յարգաւոր յաճախորդներուս, որ զարոցական նոր շրջանին համար, ծանօթ հեղինակներէ մանկավարժական բուլղոյին նոր գրութիւններով պատրաստուած զարոցական գրքեր բերելու ամ մ: Մեծաքանակ գնումներու գոհացուցիչ զեղջ: Ու եւ յանձնարարութիւն անգլիացիներու և անպատասխան կը լայ եթէ կանխիկ գրամով ապսպրուած չըլլայ:

Գրատանս հետ հաշիւ ունեցողներէ կը խնդրուի որ փութան ժամ առաջ կարգադրել:

Գնում եւ վաճառում ամէն տեսակ նամակագրութիւններու:

Հասցէ՝ A. Zarbhanlian Librairie Varna (Bulgarie)